պէս, թէ «մեր տանը մի հիւր ունենք»։ Ի սէր Աստուծոյ, եթէ ինձ սիրում ես, շուտով մտիր սենեակդ և մի դուրս գայ այն տեղից, մինչև որ անիրաւ Թուրքերը չհեռանան մեր բակից։

Այն աստիճան յուզուած ու զայրացած էի այդ վայրկեանին, որ չգիտէի՝ լսե՞լ մօրս ստրկական խրատները, թէ՞ ցոյց տալ ամբարտաւան և յանդուգն Թուրքերին, որ մենք չենք ապրում Թիւրքիայում, այլ՝ Կովկասում և այն էլ հզօր Ռուսիայի իշխանութեան տակ։ Ձեռքս հաստ ու ծանրը մի փայտ առած, կամաց-կամաց քայլերս ուղղեցի դէպի Թուրքերը և շեշտելով հարցրի նրանց.—Ի՞նչ էք ուզում։ Ձիաւոր Թուրքերից մէկը կմկմալով ասաց ինձ.—Այս ընտանիքի մէջ ընկուզէ փայտից շինուած ծալովի սեղանն է ուզում մեր տէր Խրէկը։—Փողն ուղարկե՞լ է։—Մուսուլման (միւսիւլման) բէկն ինչո՞ւ պիտի փող տայ մի որևէ «գեաւուրին»։ Գեաւուր նախատական խօսքից յետոյ, այլ ևս չկարողացայ զսպել իմ զայրութս և ձեռքիս փայտը բարձրացնելով, սկսեցի սպառնանքով Թափահարել նրանց վրայ։—Հիմա ձեզ բոյորիդ էլ ես կտոր-կտոր կանեմ,—ասացի բարկացած. մի՞թէ պարտաւոր է քրիստոնեայ ժողովուրդը ձրի կերակրել ամեն մի պատահող գողերին ու սոված գայլերին։ Ի՞նչպէս է ձեր անունն ու ազգը։ Թուղթ ու մատիտ հանեցի գրպանիցս, որ գրեմ և յայտնեմ, ուր հարկն է։ Բայց պոռոտախօս և վախկոտ Թուրքերը մտրակեցին իրենց ձիերին և մի ակնթարթում անյայտացան մեր տան մօտից։ Մայրս զարմա-